ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՓՈԽՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԸ

§ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՇԵՄԻՆ

1 Կաթոլիկների և հուգենոտների միջև հաշտություն էր կնքվել, որը պետք է ամրապնդվեր դինաստիական ամուսնությամբ՝ հուգենոտների առաջնորդ Նավարրայի թագավոր Հենրիխ Բուրբոնը պետք է ամուսնանար Ֆրանսիայի թագավորի քրոջ հետ: Արքայական հարսանիքին ներկա գտնվելու համար Փարիզ էին ժամանել մեծ թվով հուգենոտներ: Նախօրոք նշան անելով հուգենոտների տները, կաթոլիկները հարսանիքի նախօրեին կոտորեցին ավելի քան 30 հազար մարդու: Սա պատմությունից հայտնի «Բարդուղիմեոսյան գիշերն» էր: Կրոնական պատերազմները Ֆրանսիայում ավարտվեցին միայն դարավերջին, երբ Հենրիխ IV-ը, դառնալով Ֆրանսիայի թագավոր, ստորագրեց «Նանտի էդիկտը»՝ հուգենոտներին իրավունք տալով ազատ դավանելու իրենց կրոնը:

1

«Ճիզվիտ» անվանումը ծագում է Հիսուս անվան լատիներեն «Ճեզուս» արտասանությունից: Ճիզվիտների օրդենում սահմանված էր խիստ կարգապահություն: Կրտսեր անդամները պարտավոր էին առանց առարկության կատարել ավագների հրամաններն ու հրահանգները: Ի տարբերություն այլ միաբանների, ճիզվիտները աշխարհիկ հագուստ էին կրում և իրենց պահում էին այնպես, որ չմատնեն օրդենին իրենց պատկանելությունը:

Ճիզվիտներն աշխատում էին նվաճել թագավորների, վարչապետների, նախարարների ու մեծահարուստների վստահությունը, նրանց միջոցով հետապնդել բողոքականներին, վերականգնել կաթոլիկ եկեղեցու ազդեցությունը: Եթե որևէ իշխանավոր դեմ էր կանգնում նրանց նպատակին, ճիզվիտները գործի էին դնում դաշույնն ու թույնը:

Խաբեությամբ ու խարդախությամբ, սպառնալիքներով ու սպանություններով օրդենը մեծ հարստություն կուտակեց: Միաբանությունը Հարավային Ամերիկայում տիրում էր հողերի, ձեռնարկությունների, նավերի և նույնիսկ գաղութների: Միևնույն ժամանակ ճիզվիտները հիմնում էին անվճար դպրոցներ և քոլեջներ կրոնական կրթության մակարդակը բարձրացնելու համար: Եկեղեցու ծիսակարգը ավելի հրապուրիչ դարձնելու համար գեղեցիկ եկեղեցիներ էին կառուցում, խրախուսում էին եկեղեցական երաժշտությունը և երգեցողությունը: